

Բոլոր ամբաստանութիւնները խնամով գրի առնուեցան. այս ամբաստանագիրն ապա «ի դուռն ժամուն զարկին», աւելի յայտնանախատ ընելու եպիսկոպոսն եւ ժողովուրդին զայրոյթը աւելի հրահրելու համար:

Երբ կը լսեն զայս եպիսկոպոսին քոյրերը՝ կը վազեն Աւագերէցին խափանելու այս անարգանքը: Բայց երեսփոխանութիւնն անունկնդիր կը մնայ ամէն աղաչաւոր ձայնի.

Ասեն. կ'ուզէ թող թուրք լինի.

Մէկ մարդու պակսին ի՞նչ լինի:

Զայրոյթն այստեղ կանգ չառաւ. «Հայոց աղայք եւ քահանանին» խորհեցան չար խորհուրդը եւ գացին եկեղեցւոյ դռները «մեծ-մեծ կողպէնքներով» ամրափակեցին, որպէս զի եպիսկոպոսը, որուն քով կը գտնուէին բանալիները, չկարենայ մուտ գործել եկեղեցին:

Այժմ միայն խելահաս եղաւ Սաչատուր Վարդապետ, թէ ի՞նչ անդունդի առջեւ բերաւ հասցուցնաւը, որ կը ղեկավարուէր ամբոխին խորհրդով: Յուսահատ իրաց առած դահավէժ հոսանքին առջեւ, թօթափեց օձիքն ու յայտարարեց. «Անպարտ եմ ես ի մեղադրութենէ դուրին. դուք գիտասջիք»:

Յուսահատական էր նաեւ եպիսկոպոսին դրութիւնը: Կը լրանար հարիւրերորդ օրը, որ նա կը գտնուէր բանտարկուած իւր սենեկին մէջ: Ամէն փորձ հաշտութիւն կնքելու ժողովուրդեան հետ, վիժած էր անհետեւանք: